

դոցա միջուկը, էութիւնը զուտ պատմական է: Միայն թէ, այդ երկու տարրերը իրարուց զատել պէտք է:

Ինչ կարծիքի որ լինի բանասիրութիւնը Փաւստոսի — ինչպէս նաեւ Աշխարհագրոսի ազգութեան մասին, արդեօք դոքա հա՞յ են եղած թէ յոյն, անկասկած է բոլոր դէպքերում, որ նոքա իրենց պատմական գործերը հայերէն լեզուով են գրել: Բաւական է ուշադրութեամբ կարդալ այդ դասական երկերը, համոզուելու համար դրան: Փաւստոսի պատմութիւնը գրբուել է միայն հայերէն, իսկ Աշխարհագրոսի պատմութեան յունարէնն էս կայ: Դեռ էս հռչակաւոր դը Լազարոյ ապացուցել է վերջնապէս, որ յունարէնը թարգմանութիւնն է հայերէնից:

Ինչ որ մեզ մասնաւորապէս հետաքրքրում է Փաւստոսի Պատմութեան մէջ, այդ՝ ազգագրական-ժողովրդական տարրն է նրանում, որով այնչափ հարուստ է նա: Ներկայ կապակցութեան մէջ մենք կը դոհանանք մի քանի կարեւորագոյն կէտեր միայն վերաբոսադրելով, իբրև մի-մի թանգակին նիւթեր Հայ Ազգաշրջութեան եւ Մշակոյթի պատմութեան համար (ձեռքի տակ ունինք 1889 թ. Վենետիկ հրատարակութիւնը):

Ինչպէս որ հայ հեթանոսական կրօնի մասին Աշխարհագրոսի մօտ պահուած թանկագին տեղեկութիւնները կողմնակի ձեւով միայն աւանդուել են մեզ, քանի որ հեղինակի բուն նըպատակն է եղել՝ քրիստոնէութեան հաստատման պատմութիւնն անել, այդպէս նաեւ՝ Փաւստոս, իրեն նպատակ դնելով Դ. դարու որոշ շրջանի հայոց քաղաքական եւ եկեղեցական պատմութիւնը աւանդել, անհրաժեշտաբար կանգ է առել նաեւ հեթանոսական եւ ժողովրդական մի շարք հաւատալիքների վրայ, որոնք դեռ շարունակուած էին քրիստոնէական շրջանում արմատացած մնալ հայ ժողովուրդի մէջ: Կորիւնից մենք տեսանք, որ Ե. դարում իսկ շարունակուած էր այդ բանը:

Այսպէս, Փաւստոս պատմում է թէ (էջ 237) Ներսէս Պարթևի մահից յետոյ եւ Պապ Թագաւորի օրով ու նորա հովանու տակ՝ «Հայոց աշխարհի շատ դաւառներ եւ բազմաթիւ մարդիկ հին դիւապաշտութեան վերադարձան

եւ Հայաստանի շատ վայրերում կուռքեր կանդնեցին՝ Պապ Թագաւորից սրտապնդուելով... Ինչ որ կամենում էին՝ գործում էին համարձակութեամբ: Շատ արձաններ (պատկերս) կանգնելով՝ երկրպագում էին նոցա»:

Վահագնի եւ Անահիտի մասնաւոր յիշատակութիւնն էս գտնում ենք Փաւստոսի մօտ: Առաջինին նա նոյնացնում է Հերակլէսի հետ: ... Կործանեց (Ս. Գրիգոր) Հերակլէսի, այսինքն Վահագնի մեհեանի բաղինները, որ գտնուած էին Աշխարհագրոսի կողմում վայրում» (էջ 37): Նոյն այդ մեհեանի տեղում գտնուած մի այլբերի մասին էս խօսում է Փաւստոս, Դանիէլ ասորու լեզենդի մէջ (էջ 38): Որոշ է որ՝ այդ, ինչպէս նաեւ «Անահտի աթոռ»ի հետ կապուած լեզենդը («ի տեղի դիցն, զոր կոչեն աթոռ Անահայ) ժողովուրդի մէջ դեռ էս կենդանի էր Փաւստոսի օրով:

Յարպէզների մասին էս Փաւստոսի պահած դրոյցը ամենահինը համարելու է հայ մատենագրութեան մէջ: Երբ Վարազդատ թագաւորը սպաննել է տալիս ազգից սիրուած հերոս Մուշեղ Մամիկոնեանին, ժողովուրդի հաւատալը չի գալիս թէ նա մեռած լինել կարող է: Ուստի, Մուշեղի կտրուած «դուրսը իսկոյն կարում միացնում են մի կոճղի եւ աշտարակի տանիքի վրայ դնում, ասելով թէ՝ «որովհետեւ նա քաջ մարդ էր «Առլէզները կ'իջնեն եւ յարութիւն կը տան նրան»: Եւ սպասում էին ու յոյս ունէին, որ յարութիւն կ'անէ, մինչեւ որ նեխեցաւ մարմինը: Ապա թէ իջեցրին աշտարակից եւ լացին ու թաղեցին, ինչպէս որ սովորութիւն էր» (Ե., 36):

Մեռելաթաղը եղբրամայրերի առաջնորդութեամբ էւ լաց ու կոծով, սուգի արտակարգ արարողութիւններով կատարելը Հայաստանում տարածուած սովորութիւններից էր, հակառակ որ եկեղեցին խստիւ արգելել էր այդ: Փաւստոս դորա մի քանի դէպքերը յիշում է: Այսպէս, երբ Պոսարովի եւ Վրթանէսի օրով հայ եւ պարսիկ պատերազմում ընկնում է Վաչէ գորավարը, «անսովոր սուգ է պատում (Հայոց) ամբողջ աշխարհին», թագաւոր թէ իշխան, ազատ թէ շինական՝ «արտասուակաթ ողբերով եւ ծանրաթախիծ հոգով, բարձրաձայն կոծերով եւ շափազանց մեծ վայնասունով